ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կ Ե Ր Պ Ա Ր Վ Ե Ս Տ

ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ) ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2022թ. ‹‹Կերպարվեստ›› առարկան դասավանդող ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման հարցաթերթիկի կառուցվածքը, տրված են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների պատասխանի գնահատման չափանիշները և դրա լրացման կարգը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Ուսուցիչների ատեստավորման հարցաթերթիկի կազմման համար որպես հիմք են ընդունվել «Կերպարվեստ» առարկայի հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերը:

ՀԱՐՑԱՇԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հարցաթերթիկը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 67 միավոր: Բովանդակային առումով հարցաթերթիկում առկա են «Կերպարվեստ» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրի բոլոր բաժինները.

-Բնօրինակից նկարչություն

-Թեմատիկ նկարչություն

-Դեկորատիվ նկարչություն

-Արվեստի պատմություն և տեսություն

Հարցերը պարունակում են նաև գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, մանրանկարչության, դիզայնի, ազգային տարազի շրջանակները շոշափող հարցեր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ հիմնական տեսակները. բաց հարցեր, ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներ:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԼՐԱՑՄԱՆԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

Կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համարին կամ համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել X նշանը:

Որոշ առաջադրանքների դեպքում պահանջվում է գրել համապատասխան թիվը կամ տառը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Այն պատասխանները, որոնք պետք է շարադրի ուսուցիչը կգնահատվի ըստ հարցի հիմնական բովանդակության գաղափարի առանցքային դրույթների առկայության դեպքում:

Հարց 1-ից 2-ը գնահատվում է հետևյալ կերպ. 7 ճիշտ պատասխանի դեպքում տրվում է 1 միավոր, 8 ճիշտ պատասխանի դեպքում՝ 2 միավոր և 9 ճիշտ պատասխանի դեպքում 3 միավոր: Եթե պատասխանում առկա է ընդամենը 6 և պակաս ճիշտ պատասխան, ապա ոչ մի միավոր չի տրվում:

Հարց 3-ից 5-ը գնահատվում է հետևյալ կերպ. 3 ճիշտ պատասխանի դեպքում տրվում է 1 միավոր, 4 ճիշտ պատասխանի դեպքում՝ 2 միավոր: Եթե պատասխանում առկա են 2 և պակաս ճիշտ պատասխան, ապա ոչ մի միավոր չի տրվում:

Հարց 6-ից 9-ը գնահատվում է հետևյալ կերպ. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում տրվում է մեկ միավոր ընդամենը (առավելագույնը) 2 միավոր յուրաքանչյուր հարցի համար: Օրինակ.

Ո՞ր ժանրին է պատկանում տվյալ ստեղծագործությունը և ո՞վ է հեղինակը:
1-2 միավոր

1) _____
2) _____

Հարց 10-ից 29-ը գնահատվում է 1 միավոր յուրաքանչյուր հարցի բոլոր ճիշտպատասխանների դեպքում:

Հարց 30-ից 60-ը գնահատվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: